ՎԱՀԱՆ ԱՐՄԱՆԻ ՀՈՒՆԱՆՅԱՆ

Ծնվել է 1986թ. նոյեմբերի 19-ին, Երևանում:

Աշխատանքային գործունեություն

09-11.2026թ.	ՀՀ ԱԳՄԱ նախարարի խորհրդական,
04.2024թ.-08.2026թ.	ՀՀ ԱԳ նախարարի խորհրդական,
02-04.2024թ.	ՀՀ ԱԳ նախարարի օգնական,
03.2023-02.2024թ.	ՀՀ ԱԳՆ Ամերիկյան երկրների վարչության ԱՄՆ և Կանադայի բաժնի 1-ին քարտուղար,
08.2021-03.2023թթ	ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար,
12.2020-08.2021թթ.	ՀՀ փոխվարչապետի խորհրդական,
10.2018-12.2020թթ.	ՀՀ փոխվարչապետի մամուլի քարտուղար,
09.2018-02.2020թթ.	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս,
12.2017-06.2018թթ.	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի ցանցային համագործակցության պատասխանատու,
10-12.2017թ.	ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության տեղեկատվության և հասարակայնության հետ կապի բաժնի երրորդ քարտուղար,
12.2013-09.2017թթ.	Թուրքմենստանում ՀՀ դեսպանության կցորդ, ապա երրորդ քարտուղար (դրվել են նաև հյուպատոսի պարտականությունները),
06.2012-12.2013թթ.	ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության լրատվամիջոցների հետ կապի բաժնի կցորդ:

Զինվորական ծառայություն

2008-2010թթ.	Ծառայություն ՀՀ զինված ուժերում:

Պարգևներ և խրախուսանքներ

09.2020թ.	ՀՀ վարչապետի հուշամեդալ,
01.2024թ.	Էյզենհաուերի անվան մրցանակ,
03.2025թ.	ՀՀ ԱԳՆ 2-րդ աստիճանի Պատվո մեդալ:

Կրթություն

2023-2024թթ.	ՆԱՏՕ-ի պաշտպանական քոլեջ,
2011-2013թթ.	ԵՊՀ եվրոպագիտության կենտրոն (մագիստրոս),
2011-2012թթ.	ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց,
2004-2008թթ.	ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ (բակալավր):

Դասընթացներ

06.2026թ.	Անվտանգության քաղաքականության Ժնևի կենտրոնի «Քաղաքականության գործողությունների ռազմավարական կանխատեսում» դասընթաց,
09.2025-03.2026թթ.	Սթենֆորդի համալսարանի «LEAD» ծրագիր,
04.2025թ.	Մերձավոր Արևելք Հարավային Ասիա ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի «Հակաահաբեկչության և տարածաշրջանային անվտանգային համագործակցության բանակցային հմտությունների տիրապետում» դասընթաց, ԱՄՆ,
03-06.2019թ.	Կշիշտոֆ Սկուբիշևսկու անվան հետազոտական կրթաթոշակ ու եռամսյա հետազոտական աշխատանքներ, Լեհաստան:

2026թ. նոյեմբերի 20-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Լեհաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վարշավա):

Օտար լեզուների իմացություն

Անգլերեն, ռուսերեն, լեհերեն:

Ընտանեկան կարգավիճակ

Ամուսնացած չէ: